

Գեորգ Խուդինեան



**ՀԱՅ  
ՅԵՂԱՓՈՒԿԱՆ  
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

(Գումարման 100-ամեակի առթիւ)

ԵՐԵՒԱՆ  
1992







ԳԷՈՐԳ ԽՈՒԴԻՆԵԱՆ

ՀԱՅ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Առաջին ընդհանուր ժողովը

(Գումարման 100-ամեակի առթիւ)

Երևան  
1992



Հրատարակուիւն  
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

«Դ Է Պ Ի Ե Ր Կ Ի Ր»  
մատենաշար թիւ 7

784-92



## ԵՐԿՈՒ ԽՕՄՔ

Ն.Յ. Դաշնակցութեան պատմութեան մասին թէեւ կան մեծ քանակութեամբ փաստաթղթեր՝ ցրուած աշխարհի բազմաթիւ արխիվներում, յուշագրական երկեր, մամուլի էջերում տպագրուած հաղորդումներ, դէպքերի եւ իրադարձութիւնների նկարագրութիւններ, պաշտօնական յայտարարութիւններ եւ այլն, այնուհանդերձ փոքրաթիւ է Դաշնակցութեան պատմութեանը նուիրուած ամբողջական ու համակողմանի ուսումնասիրութիւնների թիւը: Ճիշտ է, խորհրդային շրջանում խորհրդահայ բազմաթիւ գրչակներ հրապարակը ողողեցին Դաշնակցութեան պատմութեան ու գաղափարախօսութեան մասին հարիւրաւոր գրքերով, գրքոյկներով ու յոդուածներով, որոնք փաստօրէն իրականութեան լոկ նենգափոխուած ծաղրանկարներն էին, զուրկ գիտական արժէքից, յերիւրուած, անլուրջ ու անընդունելի:

Իր գոյութեան առաջին երեսուն տարիների ընթացքին Ն.Յ. Դաշնակցութիւնը մխրճուած գործի հեւքի մէջ ոչ ժամանակն ունեցավ եւ ոչ էլ հնարաւորութիւնը զբաղուելու անցեալ իրադարձութիւնների պատմագիտական վերագնահատման գործով: Նշուած ժամանակահատուածում կատարուած քայլերն այդ ուղղութեամբ լաւագոյն դէպքում չանցան յուշագրութիւնների ու քաղաքական բանավէճերի սահմանները:

Ն.Յ. Դաշնակցութեան Տալաստանից տարագրուելուց յետոյ թուով էր, թէ պիտի ստեղծուէին նպաստաւոր պայմաններ դաշնակցական պատմաբանների համար: Սակայն Դաշնակցութիւնը իբրեւ գործի կուսակցութիւն այստեղ եւս նետուեց պայքարի ասպարէզ՝ գաղթօջախներում կազմակերպելու համար հարիւրհազարաւոր գաղթականութեան հաւաքական կեանքը, պայքար մղելու հայ ժողովրդի թրշնամիների դէմ, պայքարելու գաղթօջախները կազմալուծելու ելած բոլշեւիկեան կուսակցութեան ու նրա արբանեակների դէմ, ինչը զրկեցին նրան խաղաղ ուսումնասիրական գործի հնարաւորութիւնից: “Տայրենիք”, “Վէմ” եւ դաշնակցական այլ հանդէսները մեծ դեր կատարեցին պատմական ատաղձ կուտակելու եւ Դաշնակցութեան պատմութեան այս կամ այն երեսը ուսումնասիրելու, լուսաբանելու



կամ ճշգրտելու ուղղութեամբ: Կազմակերպուեց Ն.Յ. Դաշնակցութեան կենտրոնական արխիւը, ուր կուտակուեցին մեծ քանակութեամբ փաստաթղթեր: Այդուհանդերձ Դաշնակցութեան պատմութեան շատ հարցեր դեռեւս մնում են չլուսաբանուած:

Միքայէլ Վարանդեանի կոթողական գործը՝ «Ն.Յ. Դաշնակցութեան Պատմութիւն», շատ հեռու է ամբողջական պատկերացում տալուց Դաշնակցութեան կատարած գործի մասին: Խիստ հակիրճ է նաեւ Ն.Տասնապետեանի «Ն.Յ. Դաշնակցութիւնն իր կազմութենէն մինչեւ Փ.Ընդհ. ժողով» գիրքը: Իսկ միւս բոլոր աշխատութիւնները Դաշնակցութեան պատմութեան մասին մասնակի ընդգրկում ունեն եւ վերաբերում են առանձին շրջանների, առանձին դրուագների կամ առանձին դէմքերի:

Ինչպէս յաճախ ասում է, Դաշնակցութեան պատմութիւնը դեռ չի գրուել: Նրա ամբողջական պատմութիւնը հնարաւոր կը լինի զըրել միայն այն ժամանակ, երբ համապատասխան ատաղճը կը գըտնուի ուուսումնասիրողների տրամադրութեան տակ: Այդ իմաստով մեծ արժէք կը ներկայացնեն պատմութեան այս կամ այն դրուագը նորովի քննող, լուսաբանող եւ նոր փաստերով հարստացնող նիւթերը:

Գէորգ Խուդինեանի ներկայ գրքոյկը, որ վերաբերում է Ն.Յ. Դաշնակցութեան պատմութեան այն ժամանակաշրջանին, որի մասին նիւթերն ու փաստաթղթերը խիստ սակաւաթիւ են, մի նոր ու լուրջ քայլ է լոյս սփռելու Ն.Յ. Դաշնակցութեան առաջին Ընդհ. ժողովի գումարման հետ կապուած հարցերին: Այս աշխատութիւնը նոր տեղեկութիւններով հարստացնում է Ն.Յ. Դաշնակցութեան պատմութեան հնագոյն շերտը, որը հիմք կարող է ծառայել աւելի լավ պատկերացնելու նրա հետագայ զարգացումը:



## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հ.Յ.Դաշնակցութեան առաջին Ընդհանուր Ժողովը իր աշխատանքներն սկսեց 1892 թուականի յունիսի 20-ին Թիֆլիսում, բժիշկ Յովհաննէս Լոու-Մելիքեանի բնակարանում: Ժողովը յստակեցրեց կուսակցութեան քաղաքական եւ ընկերային նպատակները, արձատապէս նորացրեց կազմակերպական կառոյցը, հարստացրեց պայքարի եղանակների ու միջոցների զինանոցը: Դրանով իսկ, Արեւմտեան Հայաստանի տնտեսական ու քաղաքական ազատագրութեան համար մէկ դրօշի տակ միաւորուած, բայց ընկերային տարբեր ըմբռնումներ ունեցող ուժերի ֆեդերացիան հասունացաւ ու ծնեց նոր որակ՝ միեւնոյն գաղափարաբանութեան ու կառոյցի վրայ խարսխուող միասնական ու ամուր կուսակցութիւն: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը թէ գաղափարա-քաղաքական եւ թէ կազմակերպական առումով մէկ ամբողջութիւն դարձաւ ոչ թէ 1890-ին, այլ 1892 թուականի ամռանը՝ առաջին Ընդհանուր Ժողովում ծաւալուած սկզբունքային բանավէճերի ու քննարկումների ընթացքում:

Ուսումնասիրողները միշտ էլ մեծ հետաքրքրութիւն են դրսեւորել առաջին Ընդհանուր Ժողովի պատմութեան նկատմամբ, սակայն ըսկզբնաղբիւրների բացակայութիւնը ստիպել է նրանց բաւարարուել մակերեսային, հպանցիկ գնահատականներով: Հեղինակների ուշադրութիւնը կենտրոնացել է միայն այդ ժողովում ընդունուած կուսակցութեան «բուն ծրագրի» կամ ծրագիր-կանոնագրի վրայ, իսկ միւս հարցերը զրեթէ չեն ուսումնասիրուել, որովհետեւ 1892ի ամռան այդ օրերից մեզ արձանագրութիւններ չեն հասել, զրառումներ չեն մնացել: Միայն առկայ ոչ մեծաթիւ սկզբնաղբիւրների՝ Ոստիկանութեան դեպարտամենտի գեկուցագրերի, փոքրաթիւ յիշողութիւնների ու մամուլի մանրակրկիտ ուսումնասիրութիւնն է հնարաւորութիւն ստեղծում թէկուզ ընդհանուր գծերով ներկայացնելու



1892-ին Թիֆլիսում ծաւայուած գաղափարական պայքարի մթնոլորտը: Աւելին անել, վերականգնել ժողովի առանձին նիստերի ընթացքը անհնար է, քանզի եւ Հ.Յ.Դաշնակցութեան Դիւանում եւ նախկին Խորհրդային Միութեան արխիւներում հաւաստի ու ճշգրիտ նիւթեր դեռեւս չեն յայտնաբերուել: Մնում է յուսալ, որ մեր փորձը հետաքրքրութիւն կ'առաջացնի ուսումնասիրողների շրջանում եւ կը նպաստի պրոբլեմի աւելի համակողմանի լուսարանմանը:



## ՃԳՆԱԺԱՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԵՐՍՈՒՄ

1890 թուականի ամռանը տեղի ունեցած Հիմնադիր Ժողովներից յետոյ Հ.Յ.Դաշնակցութիւնը եռանդուն գործունէութիւն ծաւալելով իր կազմակերպական ցանցը տարածեց Անդրկովկասում, Պարսկաստանում, Ռուսաստանի հայաբնակ շրջաններում, թափանցեց Արեւմտեան Հայաստան եւ Թուրքիայի ծովափնեայ ֆաղափները: Առաջին ամիսներին կատարուած աշխատանքների թափը գերազանցել էր բոլոր սպասելիքները: Հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքում դեռեւս չէր տեսել մի կազմակերպութիւն, որը կարողանար այդքան արագութեամբ տարածուել, ուռնանալ եւ իր շարքերի մէջ ներգրաւել ազգի լաւագոյն ուժերը: Ոգեւորութիւնը այնքան մեծ էր, որ թում էր, թէ այն շուտով պիտի փոխանցուի Արեւմտեան Հայաստանի բնակչութեանը եւ արդէն 1891-ին սկսուելու է ընդհանուր ապստամբութիւն թուրքական բռնապետութեան դէմ: Այդ գաղափարով տարուած գործիչները հաշուի չէին առնում երկրի ծանր պայմանները եւ այնտեղից լսուող աղէկտուր ճիչերը մեկնաբանում էին որպէս գալիք ապստամբութեան առաջին նախանշաններ: Անդրկովկասում եւ Ռուսաստանի հայաբնակ կենտրոններում 1890ի վերջերին եւ 1891ի սկիզբներին սկսուել էր արդէն կամաւորների հաւաքագրումը եւ զէնքի ու զինամթերքի հայթայթումը: Սակայն գործը դեռեւս լուրջ հիմքերի վրայ չէր դրուած եւ մեծ ժամանակ, եռանդ ու զգուշութիւն էր պահանջում: Վառվռուն երիտասարդութիւնը յաճախ ցանկալին շփոթում էր իրականի հետ ու վարդապոյն յոյսերով օրօրում թէ իրեն եւ թէ իր շրջապատը: Իրականութիւնը շատ աւելի դաժան էր ու բարդ: Նա ընդհանուր առաջին փոխարէն պահանջում էր նուիրում, գոհողութիւն, յարատեւ կոնի ու նահատակութիւն, որին պատրաստ էին միայն եզակի նուիրեալները: Այդ պատճառով «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը» հէնց առաջին ամիսներին կանգնեց լուրջ փորձութեան առաջ: Նա ստեղծուել էր որպէս Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան համար պայքարող ուժերի միութիւն եւ իր մէջ էր ներառել ֆաղափական տարբեր դաւանանք եւ ընկերային ծագում ունեցող երիտասաղներին: Վերելքի շրջանում, երբ ոչ մեծ յաջողութիւնները գլխապտոյտ էին առաջացնում շատերի մօտ, կազմակերպութիւնը կարողանում էր պահպանել իր միասնութիւնը: Սակայն արդէն մի քանի ամիս անց նա սկսեց ճեղքեր տալ: Առանձնացան «Միութիւն» ֆրակցիան եւ 1890ի վերջերին կայացած



համաձայնութեամբ «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» հետ միաձուլուած Հնչակեան կուսակցութիւնը: Սկսուած գործընթացը, որը հետեւանք էր եւ գաղափարների եւ անհատականութիւնների բախման, կուսակցութեան մէջ մնացած առողջ միջուկին հարկադրում էր վերանայել Հիմնադիր ժողովների շրջանում որդեգրած սկզբունքները, «...վերացնել ֆեդերասիոնը, միաձուլել բոլոր խմբակները, եւ ստեղծել մէկ եւ անբաժան կազմակերպութիւն»<sup>1</sup>:

Դժուարին կացութիւն էր ստեղծուել նաեւ Հիմնադիր ժողովներից յետոյ ընտրուած «Կենտրոնի» ներսում: Դա կապուած էր Տրապիզոնում Ս. Զաւարեանի եւ Թիֆլիսում՝ Քր. Միֆայէլեանի ձեռքակալութեան ու այնուհետեւ մէկ տարով աֆտրավայր ուղարկուելու հետ: Նրանց փոխարինած նոր ուժերը չունէին համապատասխան փորձ, կամք ու հետետողականութիւն հակազդելու համար «Կենտրոնի» ներսում ուժեղացած ազատական գործիչների խմբին, որոնց պարագլուխը Լեւոն Սարգսեանն էր: Փաստօրէն 1891 թ. գարնանից մինչեւ առաջին ընդհանուր ժողովն ընկած մէկ տարում նա էր ղեկավարում կուսակցութիւնը իր գաղափարակիցների՝ Արշակ Բարխուդարեանի, Յովհաննէս Սաղաթէլեանի, Գաբրիէլ Միրզոյեանի հետ միասին: «Կենտրոնի» շուրջը հաւաքուած արմատական երիտասարդութիւնը դժգոհում էր այդ ամէնից, բայց տարուած լինելով կազմակերպական աշխատանքով եւ իր ուսերին կրքելով գործի հիմնական ծանրութիւնը, սկզբում չէր կարողանում համախմբուել: Զնայած դրան, տրտունջի ալիքը արդէն ափ էր առնում ու տարածւում: Աֆտրական ընկերներին լրացնելու եռանդուն փորձեր էին անում ոստիկանութեան կողմից խիստ հսկողութեան տակ գտնուող եւ Թիֆլիսում անընդհատ իր բնակութեան վայրերը փոխող Ռոստոմը, Ալեքսանդրապոլից այստեղ փախած Մարտին Շաթիրեանը, ոստիկանների մօտ լուրջ կասկածների տեղիք տուած Արշակ Թադէոսեանն ու Նիկոլ Մատինեանը: Սակայն եռանդուն աշխատանքը Թիֆլիսում, նոր խմբերի ստեղծումն ու զինումը տեղերում առաջ էին բերում այնպիսի խնդիրներ, որոնք հնարաւոր չէր լուծել մէկ «Կենտրոնից» ղեկավարուող կազմակերպական հին կառոյցի միջոցով: Հ.Յ.Դաշնակցութիւնը այլեւս Անդրկովկասի եւ Ռուսաստանի տարբեր շրջաններից Թիֆլիս հաւաքուած ոգեւորուած երիտասարդների մի խումբ չէր, այլ ընդարձակ կապեր ու պայքարի մեծ ասպարէզ ունեցող կուսակցութիւն էր, որը ղեկավարող «Կենտրոնը» ինչքան էլ փորձէր ուժեղ ու հեռատես լինել, չէր կարող հաշուի առնել տեղերում եռացող պայքարի ողջ բազմա-



զանութիւնն ու իւրայատկութիւնները: Առաջ էր գալիս խզում խօսքի ու գործի, նախագծի ու նրա իրականացման մեխանիզմների միջեւ, որն աւելի էր ուժեղացնում դժգոհութիւնը: «Ստեղծուեց մի ցաւալի դրութիւն, - հետագայում խոստովանում էր Ռոստոմը: - Հիմնուած հասարակութեան ոգեւորուած տրամադրութեան վրայ, Դաշնակցութեան Կենտրոնը լայն-լայն ծրագիրներ էր կազմում, Դաշնակցական գործակալները բուն երկրում մեծ աջակցութիւն էին խոստանում, տեղական գործիչները մեծ-մեծ յոյսերով սնւում, սակայն ոգեւորութիւնն իջնելուն պէս հասարակութեան խոստումներն չկատարուեցան, Կենտրոնի լայն ծրագիրները կիսակատար մնացին, իսկ աւելի ցաւալին այն է, որ թէ հարուստ դասը, թէ կենտրոնը, թէ գործակալները, թէ բուն երկրում գործիչները՝ բոլորն էլ իրենց փոխադարձաբար խաբուած տեսան եւ մէկ մէկու հետ թշնամացան: Ո՞վ էր իսկական յանցաւորը»<sup>2</sup>: Այս հարցը շատերն էին տալիս, բայց ամէն մէկը նրա համար տարբեր պատասխան էր գտնում: Կուսակցութեան ներսում սկսել էին միմեանց չհասկանալ: Հասունացել էր անխուսափելի բախումը չափաւոր-ազատական եւ արմատական-յեղափոխական պատկերացումներ ունեցող գործիչների միջեւ: Լեւոն Սարգսեանը եւ նրա կողմնակիցները համբերատար ու զգոյշ լինելու, շրջահայեցութեան կոչեր էին ուղղում տեղերում գործող երիտասարդութեանը: Նրանց նշանաբանը «Դրօշակ»ի թիւ 3 թոուցիկ թերթի առաջնորդող յօդուածում ձեւակերպուած «Պատրաստուեմք» կարգախօսն էր: «Զգոյշ եւ հեռատես» լինելու պահանջի հետ միաժամանակ «Կենտրոնի» ղեկավարները պաշտպանում էին կենտրոնացուած, միասնական ղեկավարութիւն եւ խիստ կարգապահութիւն ունեցող կուսակցութիւն ստեղծելու գաղափարը, որը ճիշտ էր ընդհանրապէս, ճիշտ էր տեսական մակարդակի վրայ, սակայն կեանքը բոլորովին այլ հունով էր ընթանում: Կուսակցութիւնը սկսել էր ձեռքից բաց թողնել կեանքի թրթռացող զարկերակը: Ընդհանուր ապստամբութեանը դանդաղօրէն ու զգուշութեամբ պատրաստուելու պահանջը բախում էր մոայլ իրականութեան, ամէն կողմից հայ ժողովրդի գլխին իջնող հարուածների, արիւնաբամ անող հարստահարութիւնների հետ, որոնք տանել այլեւս հնարաւոր չէր: Համիդիէ գնդեր ստեղծելով եւ հայկական տարրի իրաւունքների սահմանափակմամբ թուրքական կառավարութիւնը ինքն էր նախաշարժակ լինում: Բախումը դառնում էր անխուսափելի, զգուշութեան ու հեռատեսութեան կոչերը կախուած էին օդում որպէս կեանքից կտրուած գեղեցիկ խօսքեր: Հարուածին հար-



ուածով պատասխանելու ձգտումը ուժեղանում էր: Ուժերի յարաբե-  
րակցութեան անհաւասարութեան մասին ճշմարիտ ու տրամաբանական  
նախագգուշացումները փշրում էին մերկ ու դաժան իրականութեանը  
բախուելու ճանապարհով: Այդ ամէնը զգացող երիտասարդները  
ձգտում էին դէպի ասպարէզ եւ նրանց «սրբազան խենթութիւնը» ոչ թէ  
խելփի կամ հեռատեսութեան պակասի հետեւանֆն էր, այլ ստեղծուած  
այն կացութեան արդիւնքը, երբ պատուաբեր կոչին ու մահը գերադասում  
էր դանդաղ ու անխուսափելի կորստից: Եւ քանի ուժեղանում էր ար-  
մատական երիտասարդութեանը համակած այս մտայնութիւնը, այնքան  
խորանում էր անդունդը «Կենտրոնի» «հեռատես» ու «խոհեմ» ղեկա-  
վարների եւ նրանց միջեւ: Միեւնոյն ժամանակ «Կենտրոնի» որդեգրած  
ռազմավարութեան ու մարտավարութեան նկատմամբ հասունացող  
դժգոհութիւնը դուրս էր գալիս գործնական աշխատանքների ոլորտից  
ու գաղափարական գունաւորում ստանալով առաջ էր բերում նոր ու-  
րակ, համախմբուելու նոր մակարդակ ստեղծելու ձգտում: Պարզ էր,  
որ «...նախկին ծրագիրը չէր համապատասխանում գլխաւոր կէտերում  
յեղափոխական կեանքի իսկական պահանջներին», եւ երիտասար-  
դութիւնը հասկանում էր, որ «...յեղափոխութիւնը կանգ չի առնի ոչ մի  
խորտակիչ ուժի առաջ, քանի գոյութիւն ունին կեանքի տանջանքները,-նա  
միայն կը փոխի իր ձեւը, յարմարուելով նոր պայմաններին, եւ երբեք  
իւր էութիւնը»<sup>3</sup>: Այդ նոր ձեւի որոնումները ասպարէզ էին իջեցնում եւ  
նոր գործիչների, որոնք փորձում էին պահպանել իրենց աֆսորական  
ընկերների՝ Քրիստափորի ու Սիմոնի գաղափարական ուղղութիւնը՝  
հարստացնելով այն յարափոփոխ կեանքի նոր պահանջներով: «Հայ  
Յեղափոխականների Դաշնակցութիւնը» գաղափարական որոնումների  
մէջ էր, նա նոր երկունք էր ապրում եւ նրա ընդերքում սկսում էր հա-  
սունանալ մարտական, միաձոյլ կուսակցութիւն ստեղծելու գաղափարը:



## ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԵՆԱՐԱՆԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

Սեփական իդեալների մշակման անհրաժեշտութիւնը եւ յեղափոխական խմբակների պարզունակ ֆեդերացիայի առաջ բերած բարեփոխան խառնաշփոթութիւնը վերացնելու ձգտումը առաջ է քաշում կուսակցութեան ընկերային յենարանի յստակեցման պահանջ, քանի որ արդէն պարզ էր, որ «...որքան զօրացաւ Դաշնակցութեան կազմակերպութիւնը, նոյնքան բացորոշ եղաւ, որ բոլոր դասակարգերը ազգային յեղափոխութեան հետ չէին: Դաշնակցութիւնը արմատ կը բռնէր հայ աշխատատեղական զանգուածներուն մէջ եւ զօրավիգ կը գտնէր հայ յեղափոխական մտաւորականութեան բով: Հայ հարուստ դասակարգը, կղերը եւ թուլամորթ ու հակայեղափոխական տարրերը մէկ կողմ կը քաշուէին, կամ յեղափոխութեան դէմ ճակատ կը յարդարէին»<sup>4</sup>: Հայ աշխատատեղութիւնը իր տարբեր շերտերի բազմազանութեամբ հանդերձ կազմում էր տառապող ու պայքարող մի ամբողջութիւն եւ Հ.Յ.Դաշնակցութեան շարքերում օրաուր ուժեղացող իր լաւագոյն ներկայացուցիչների միջոցով յստակեցնում էր նորաստեղծ կուսակցութեան ընկերային յենարանը, կազմում նրա հիմքն ու միջուկը: Եւ Հիմնադիր ժողովներում քաղաքական խնդիրների ընդհանուր ձեւակերպումով բարարարուած յեղափոխական ուժերի բազմերանգ ֆեդերացիան արդէն զգում էր իր սեփական դէմքը ունենալու պահանջը: Ելնելով այդ պահանջի իրականացման հրամայականից նորաստեղծ կազմակերպութեան եռանդուն գործիչներից մէկը՝ Յոնան Դաւթեանը առաջ էր քաշում պարզ ու որոշակի սոցիալական դոկտրինա, նպատակ, ուղղութիւն ունեցող կուսակցութեան, այսպէս կոչուած «Հասարակական կուսակցութեան» ստեղծման ծրագիրը: Դրանով իսկ գաղափարական միասնութեան կամ գաղափարական կենտրոնացման սկզբունքը դառնում էր անհրաժեշտ պայման կուսակցութեան գոյութեան համար: Միայն նման կուսակցութիւնը կարող էր ստեղծել նոր գաղափարների այնպիսի շտեմարան, որը ձգողական դաշտի նման իր կողմը կը քաշէր ազգի լաւագոյն ուժերը: Յոնան Դաւթեանի կարծիքով «...կուսակցութիւն ասելով պիտի ընդունել մի ոյժ, մի միութիւն, որը կազմակերպուած է այնպիսի անհատներից, որոնք ունեն իրենց որոշ ու դրական հասկացողութիւնը մարդկային կեանքի ընթացքի ու կազմութեան մասին, ունեն նոյն սոցիալական դոկտրինան, «հասարակական հաւատը» - իդեալը, որով նրանք ղեկավարուում են իրենց հասարակական գործու-



նէութեան մէջ: Միայն այսպիսի անհատների միութիւնը ունի իր *raison d'être* իր գոյութեան իրաւունքը, որովհետեւ այդպիսի միութեանն է վիճակուած, որ ունի հասարակական որոշ նպատակներ, կատարել նորմալ դեր հասարակական կեանքում»<sup>5</sup>:

Դեռեւս այս գաղափարը յստակ ձեւակերպելուց առաջ՝ 1892 թուականի ապրիլ ամսին Յոնան Դարթեանը Տիգրան Օֆոնեանի հետ միասին կազմել էր մի կոչ, որով Ընդհանուր Ժողով էր հրաւիրում կուսակցական ընկերներին «ի նկատի ունենալով մեր յեղափոխական գործերի ընդհանապէս թոյլ ընթացքը, ժողովրդի գործից սառչելը, որ հետեւանք են գլխաւորապէս գործողների մէջ մի ընդհանուր ընկերական կապ, գործունէութեան որոշ ուղղութիւն-տափտիկը չլինելուն եւ բոլորիս դիմած կէտ-նպատակի անորոշութեան...»<sup>6</sup>: Առաջարկելով կայանալիք Ընդհանուր Ժողովի համար իւրաքանչիւր շրջանից ընտրել մէկ պատգամաւոր, նախաձեռնող խումբը այդ ժողովի ֆննութեանն էր ներկայացնում հետեւեալ խնդիրները.

- «1) Յեղափոխութեան նպատակը:
- 2) Կազմակերպութիւնը:
- 3) Միջոց-տակտիկան»<sup>7</sup>:

Այսպիսով, Ընդհանուր Ժողովը պիտի ֆննէր այն հիմնական ծրագրային դրոյթները, որոնք Հիմնադիր Ժողովների շրջանում ձեւակերպուել էին գաղափարական տարբեր ուղղութիւնները մէկ ընդհանուր խնդրի շուրջը համախմբելու եւ «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն» ստեղծելու նպատակով: Այժմ այդ գաղափարական խառնարանի ընդերքում հասունացող կուսակցութիւնը փորձում էր ազգային ընդհանուր տեսլականը մեկնաբանել ընկերային իր հաւատամքի պրիզմայի միջով: Եւ Հիմնադիր Ժողովներում իր ձեւակերպումը ստացած հիմնական պահանջը՝ «Թիրփաց-Հայաստանի տնտեսական ու ֆաղափական ազատութիւնը» ձեռք բերելու խնդիրը, որը դիտւում էր որպէս յեղափոխութեան նպատակ, նախաձեռնող խմբի կողմից ձեւակերպւում էր որպէս «Թիրփա-Հայաստանում ժողովրդական-նամկավարական կազմակերպութիւն»<sup>8</sup> ստեղծելու ծրագիր: Սա հայ ազատամարտի ընկերային խնդիրների որոշման ու յստակեցման փորձ էր, որը սակայն շրջանցում էր ֆաղափական ազատագրութեան խնդիրը, առանց որի անհնար ու անիմաստ էր «ժողովրդական-նամկավարական կազմակերպութիւնը»: Այդ էր պատճառը, որ հետագայում՝ առաջին Ընդհանուր Ժողովում մշակուած ծրագրում որպէս հիմնական ու առաջնային հարց նորից



բարձրացում էր Տանկահայաստանում տնտեսական ու ֆադաֆական ազատութիւն ձեռք բերելու խնդիրը, իսկ ռամկավարական հասարակարգի ստեղծումը իրաւացիօրէն դիտւում էր որպէս նրա բաղկացուցիչ մասերից մէկը, որին հասնելու համար առաջադրւում էին մարդկային հիմնական ազատութիւնները պահանջող ծրագրային դրոյթներ՝ հաւասար ընտրական իրաւունք, կեանքի ապահովութիւն, ազգութիւնների հաւասարութիւն եւ այլն:

Նախաձեռնող խմբի կազմած հրաւերում առաջ էր ֆաշւում, հիմնաւորւում նաեւ ապակենտրոն կառոյց ստեղծելու անհրաժեշտութիւնը. «Յեղափոխական կազմակերպութիւնը բաժանուած պէտք է լինի շրջանների: Ընդհանուր բնաւորութիւն կրող խնդիրները վճուում են շրջանների ներկայացուցիչների հերթական եւ արտակարգ ժողովներում, որ կոչւում են «գործադիր ժողով» կամ «գործադիր մարմին», որի վճիռներին եւ իրաւասութեան ենթարկւում է ամբողջ կազմակերպութիւնը: Այդ ժողովներում խնդիրները վճուում են ձայների մեծամասնութեամբ, բացի ընդհանուր ապստամբութեան ծանր եւ վճական խնդրից, որի համար պահանջւում է «գործադիր ժողովի» ձայների երեք քառորդը: Իսկ տեղական եւ շրջանական խնդիրները վճուում են տեղական ժողովներում»<sup>9</sup>: Այսպիսով, եթէ 1892 թուականի մայիսին Թաւրիզում շարադրած իր յօդուածում Յոնան Դաւթեանը առաջադրւում էր սեփական աշխարհայեացք, սոցիալական դոկտրինա մշակելու պահանջը, ապա դեռեւս դրանից առաջ՝ 1892ի ապրիլին Տ. Օֆոնեանի հետ խըմբագրած «Հրաւերի» մէջ հիմնաւորւում էր կուսակցութեան համար ապակենտրոն կառոյցի անհրաժեշտութիւնն ու նպատակայարմարութիւնը: Դա ցոյց է տալիս, որ Յոնան Դաւթեանի եւ նրա ընկերների ջանքերով Ընդհանուր ժողովի նախօրէին՝ 1892 թուականի ապրիլ-մայիսին արդէն սաղմնային ձեւով առաջ էին ֆաշւում ու հիմնաւորւում Հ.Յ.Դաւթեանի կուսակցութիւնը պայմանաւորող գաղափարական կենտրոնացման եւ կազմակերպական ապակենտրոնացման սկզբունքները: Այդ գաղափարները դեռեւս խիստ աղօտ էին ձեւակերպուած, սակայն նրանք այն առաջին ծիւերն էին, որոնց վիճակուած էր անելու եւ ճիւղեր տալով կազմելու կուսակցութեան ողջ կառոյցի հիմքը:



## ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԸ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ընդհանուր ժողով հրաւիրելու համար Յոնան Դաւթեանի, Ռոստոմի եւ Տիգրան Օֆոնեանի ձեռնարկած ֆայլերը արդէն շարժման մէջ էին դրել ժամանակաւոր ընդարմացման մէջ գտնուող Հ.Յ.Դաշնակցութեանը՝ շարքերին փոխանցելով պայքարի միջոցներն ու հեռանկարները յստակեցնող որոշակի տեսակէտների մի համակարգ: Միաժամանակ սկսուել էր Ընդհանուր ժողովի կազմակերպական նախապատրաստումը, որը կապուած էր մեծ դժուարութիւնների հետ: Շուտով աֆսորի վայրից Թիֆլիս էին ժամանելու Քր. Միֆայէլեանը եւ Սիմոն Զաւարեանը, սակայն պարզ էր, որ ոստիկանութիւնը այստեղ նոյնպէս շարունակելու էր իր հսկողութիւնը նրանց նկատմամբ: 1891ի մայիսին իր սենեակում կատարուած խուզարկութիւնից յետոյ ոստիկանների տեսադաշտից անհետացել էր Ռոստոմը եւ նման պայմաններում նորից չէր կարող բացայայտօրէն ասպարէզ մտնել: Անցնելով Թաւրիզ նա ընկերների հետ միասին պատրաստուում էր Ընդհանուր ժողովին: Զնայած այս ծանր կացութեանը «Կենտրոնը» որոշեց ժողովն անցկացնել Թիֆլիսում եւ նշանակուեց նրա բացման ժամկէտը՝ 1892 թ. յունիսի 20-ը: Որոշման մասին տեղեակ պահուեցին տեղական կոմիտէները: Սակայն ուղարկուած հրաւերների մի մասը ընկաւ ոստիկանութեան ձեռքը ու սկսուեց մի գաղտնի հետաքննութիւն, որի մասին իրենք՝ Ընդհանուր ժողովը նախապատրաստողները տեղեկութիւն չունէին: Կովկասի կառավարչապետի գրասենեակի տնօրէնը 1892թ. յունիսի 1ին յայտնում էր Թիֆլիսի նահանգապետ Գեորգի Շերվաշիձէին, որ «Ներքին գործերի մինիստրի տեղակալը, ոստիկանութեան պետը, կառավարչապետին է յանձնել գաղտնի աղբիւրից ստացուած մի նամակի պատճէն: Այն անցեալ ապրիլի 30ին ուղարկուած էր Թիֆլիսից Ախալցխա ոմն Սրաբովին՝ յանձնելու համար Արշալոյսեանցին: Նրա մէջ տրուում են հրահանգներ հրոսակային խմբերին, ինչպէս նաեւ հաղորդում է ամառը կայանալիք «Ընդհանուր համագումարի» մասին»<sup>10</sup>: Կառավարչապետի գրասենեակը պահանջում էր ձեռքակալել ու պատասխանատուութեան կանչել Սրաբովին եւ Արշալոյսեանցին: Քիչ անց՝ յունիսի 12ին Կառավարչապետի գրասենեակի փոխտնօրէնը աւելի ճշգրիտ տեղեկութիւններ է հաղորդում Գ. Շերվաշիձէին. «Ներքին գործերի մինիստրի անունից մինիստրի տեղակալ գեներալ-լէյտենանտ



Շեբեկոն հեռագրով (ստացուած այս յունիսի 11ին) տեղեկացրել է Կա-  
 նավարչապետին, որ հաւաստի կերպով յայտնի է, թէ յունիսի 20ին  
 Թիֆլիսում նշանակուած է հայկական խմբակների ներկայացուցիչների  
 համագումարը եւ որ այդ առիթով Թիֆլիսից հրաւերներ են ուղարկել  
 Արշակը՝ էրիւան, հայկական ճեմարան, Յակոբ Թեոսեանցին եւ ան-  
 յայտ մի անձնաւորութիւն՝ Ախալցխա-Ալեքսանդր Սրաբովին՝ յանձնելու  
 համար Արշալոյսեանցին»<sup>11</sup>: Գ. Շերվաշիձէից պահանջում էին պարզել  
 Արշակի անձը եւ միաժամանակ յայտնում էին, որ Երեւանի նահան-  
 գապետին կարգադրուել է պարզելու Երեւանում բնակուող Թեոսեանցի  
 (Թադէոսեանցի) ով լինելը: Գ. Շերվաշիձէին յանձնուեցին նաեւ քաղ-  
 ւածքներ ապրիլի 30ին Թիֆլիսից Ախալցխա ուղարկուած նամակից,  
 ինչպէս նաեւ այդ նամակին կցուած փաստաթղթի պատճէկը: Այն վեր-  
 նագրուած էր «Հրահանգներ հրոսակային խմբերին»<sup>12</sup>: Հիմնուելով  
 դրանց վրայ Ոստիկանութեան դեպարտամենտը 1892թ. յունիսի 11ին  
 յայտնում էր Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչութեան պետին,  
 որ նախապատրաստուող համագումարում «...նախատեսուում է բննել  
 նախկին բոլոր սխալներն ու բացթողումները եւ միջոցներ ձեռնարկել  
 ապագայում սխալներից խուսափելու համար»<sup>13</sup>: Ոստիկանութեան դե-  
 պարտամենտը պահանջում էր գաղտնի վերահսկողութիւն հաստատել  
 բոլոր այն պատգամաւորների նկատմամբ, որոնք կը ներկայանան  
 Ընդհանուր Ժողովին եւ նրանց մասին մանրամասն տեղեկութիւններ  
 հայթայթել: Մասնաւորապէս, պահանջում էր եթէ հնարաւոր է պարզել  
 «...Թիֆլիսում բնակուող ոմն Տ.Օ.ի անձը, որը ամենայն հաւանակա-  
 նութեամբ հայերի շրջանում ամէնից նշանաւոր գործիչներից մէկն է եւ  
 ծանօթ է ախալցխացի Արշալոյսեանցին...»: Թիֆլիսից Ախալցխայում  
 ապրող Արշալոյսեանցին Ալ. Սրաբովի միջոցով նամակ ուղարկած Տ.  
 Օ.-ն առաջին Ընդհանուր Ժողովի եռանդուն կազմակերպիչներից  
 մէկը՝ ախալցխացի Տիգրան Օֆոնեանն էր: Ամենայն հաւանականու-  
 թեամբ հէնց նա էր կազմել նաեւ «Հրահանգներ հրոսակային խմբե-  
 րին» մանրամասն փաստաթուղթը՝ Օլթիի ու Նարիմանի շրջանում իր  
 մղած կռիւների փորձը ամփոփելու ճանապարհով: Տ.Օֆոնեանի Ա-  
 խալցխա ուղարկած նամակից ոստիկանութեան կողմից կատարուած  
 քաղուածքներում նշուում էր. «Ուղարկում եմ Ձեզ հրահանգներից մէկ  
 օրինակ: Յայտնեցէ՛ք Ձեր մօտ գործերի վիճակի մասին: Ձեր լուծութիւնը  
 անհասկանալի է: Ամռանը տեղի կ'ունենայ ընդհանուր համագումարը,  
 այդ համագումարում Ձեր խմբի կողմից պէտք է մասնակցի մէկ ներ-



կայացուցիչ, որին նախօրոք ընտրեցէք եւ մեզ յայտնէք այդ մասին, որպէսզի մենք կարողանանք նրան իր ժամանակին հրաւիրել համագումարին ներկայ լինելու համար»<sup>15</sup>: Շուտով յայտնի դարձաւ նաեւ Տիգրան Օֆոնեանի հայրենակիցների լուսթեան պատճառը: Երբ նահանգապետ Գ. Շերվաշիձէն 1892թ. յունիսի 3ին կարգադրեց Ախալցխայի գաւառապետին պարզել Ալ. Սրաբովի եւ Արշալոյսեանցի անձը, վերջինս յունիսի 21ի զեկուցագրում նշում էր, որ «...Ախալցխայում իսկապէս կայ Սրաբովների՝ ախալցխացի ֆաղֆենիների մի ֆանի ընտանիք, դրանք են հարազատ եղբայրներ Աւետիս, Պետրոս, Պօղոս, Մարտիրոս եւ Ալեքսանդր Սրաբովները, որոնցից Ալեքսանդրը սրանից մօտ երեք ամիս առաջ մահացել է Ախալցխայում»<sup>16</sup>: Այսպիսով, Տ. Օֆոնեանը նամակ էր ուղարկել Ալ. Սրապեանին, չիմանալով որ վերջինս մահացել է եւ ամենայն հաւանականութեամբ հէնց այդ պատճառով էր նամակն ընկել ոստիկանութեան ձեռքը: Իսկ Արշալոյսեանցի մասին, որին Ալ. Սրապեանը պիտի յանձնէր այդ նամակը, ոստիկաններին տեղեկութիւններ հաւաքել չյաջողուեց, ֆանի որ անկասկած Արշալոյսեանց ազգանունը կամ կեղծանուն էր կամ էլ յեղափոխական մարմնի անուն: Դրանով հետաքննութիւնը մտաւ փակուղու մէջ: Փակուղու մէջ մտաւ նաեւ Թիֆլիսից ոմն Արշակի կողմից երեսան ուղարկուած նամակի հեղինակի եւ հասցեատիրոջ որոնման գործը: Թէեւ 1892թ. յունիսի 19-ին Թիֆլիսի ոստիկանապետը Շերվաշիձէին ուղարկած իր զեկուցագրում յայտնում էր, որ Թիֆլիսից երեսան ուղարկուած հրաւերների հեղինակը պէտք է լինի Արշակ Տէր-Թադէոսեանը, որը «Կենտրոնի» ակտիւ գործիչներից մէկն էր, բայց միաժամանակ աւելացնում էր. «Իսկ ինչ վերաբերում է տեղեկութեանը, որ Թիֆլիս ֆաղաֆում այս յունիսի 20ին իբր թէ նշանակուած է հայկական խմբակների ներկայացուցիչների համագումարը, ապա գաղտնի ճանապարհով կատարուած ստուգմամբ այդ ցուցմունքը չհաստատուեց»<sup>17</sup>: Մինչդեռ Ընդհանուր Ժողովին ընդամենը մէկ օր էր մնացել եւ պատգամաւորները արդէն Թիֆլիսում էին: Հ.Յ. Դաշնակցութիւնը գործում էր խիստ գաղտնի եւ ոստիկաններին գուշակութիւններից այն կողմ անցնել չէր յաջողում: Հետագայում Ընդհանուր Ժողովից երկու ամիս անց երեսանի նահանգապետը յայտնում էր, թէ իբր 1892ի գարնանը Թիֆլիսից երեսան ուղարկուած հրաւերի հեղինակը Արշակ Տէր-Գրիգորեանն էր, իսկ հասցեատէրերը՝ երեսանի հայկական նեմարանի մաթեմատիկայի ուսուցիչ Յակոբ Թեոսեանը (Թադէոսեանը) եւ



վանառական Առաքել Աֆրիկեանի մօտ որպէս կառավարիչ աշխատող Գեղէոն Ահարոնեանը<sup>18</sup>: Վերջինս որպէս Հ.Յ.Դաշնակցութեան Երեսանի կոմիտէի ամենաձեռներէց գործիչներից մէկը իր վրայ էր հրաւիրել ոստիկանութեան ուշադրութիւնը: Սակայն այս ամէնը նոյնպէս մնացին սոսկ որպէս գուշակութիւններ: Հ.Յ.Դաշնակցութեան փայլուն կոնսպիրացիան փրկեց դրութիւնը եւ փաստաթղթեր յայտնաբերելով ու մի շարք ազգանուններ պարզելով ոստիկանութիւնը չկարողացաւ տեղեկանալ այն մասին, որ ժողովը ինչպէս նախատեսուած էր յունիսի 20ին, այնպէս էլ տեղի ունեցաւ եւ իր աշխատանքներն սկսեց նոյն ժամկետում ու նոյն վայրում՝ Թիֆլիս քաղաքում:



## ԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԷԻՆ

Նախաձեռնող խումբը հրաւերներ ուղարկեց քաղաքական միւս կուսակցութիւններին ու նրանց առանձին գործիչներին: Թիֆլիս մեկնելուց առաջ Յոնան Դաւթեանը Թաւրիզից նամակ գրեց հնչակեան Ռուբէն Խանազատին ու նրան յայտնեց Հ.Յ.Դաշնակցութիւնը ապակենտրոն կուսակցութիւն դարձնելու ուղղութեամբ իր եւ Ռոստոմի ձեռնարկած քայլերի մասին: Իր յուշերում Ռ. Խանազատը վկայում է. «Այդ նպատակով պատգամաւորական ժողով պիտի գումարուի շուտով Թիֆլիսում, - գրում էր ինձ Դաւթեանը, - մենք պիտի աշխատենք՝ միատարր ու սոցիալիստական դարձնել Դաշնակցութիւնը, որն այլեւս չպիտի կոչուի Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն, այլ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն»<sup>19</sup>: Խնդրելով միջնորդի դեր ստանձնել երկու կուսակցութիւնների միջեւ, Յոնան Դաւթեանը բացատրում էր Ռ. Խանազատին, որ ապակենտրոն կառոյց ստեղծելու դէպքում «...այլեւս Հնչակեան այժմեան կենտրոնը եւ նրա մասնաճիւղերը կախումն չեն ունենայ Թիֆլիսից եւ միանգամայն անկախ կը լինին իրանց բոլոր գործունէութեանց մէջ»<sup>20</sup>: Վերջում Յոնան Դաւթեանը գտնում էր, որ եթէ հնչակեան ղեկավարները ձախողեն կուսակցութիւնների միութեան գործը, Ռ. Խանազատը պէտք է հեռանայ իր ընկերներից եւ անհատապէս միանայ նորաստեղծ կուսակցութեանը: Սակայն այս առաջարկը անպատասխան մնաց:

Ստանալով Հ.Յ.Դաշնակցութեան հրաւերը Ընդհանուր ժողովին մասնակցելու համար իրենց ներկայացուցիչներին էին ուղարկել արմենականները: Ա.Եկարեանի վկայութեան համաձայն Վանից Թիֆլիս պիտի գնային Գ. Պէտրոսեանը (Շիկահեր), Գ.Բաղդէջեանը (Մանուկեան) եւ Վասպուրականում Հ.Յ.Դաշնակցութեան ներկայացուցիչ Պետրոն (Ալ. Պետրոսեան)<sup>21</sup>: Վերջինս Վանում գործելու առաջին շրջանում լիովին համերաշխ էր արմենականների հետ<sup>22</sup> ու դեռեւս չէր յայտնել նրանց, որ ինքը Հ.Յ.Դաշնակցութեան անդամ է: Լեւոն Սարգսեանը վկայում է, որ ժողովի մասնակիցների մէջ է եղել նաեւ արմենականների ճանաչուած առաջնորդ Մկրտիչ Աւետիսեանը (Թերլեմեզեան), իսկ Ֆրանսիայից նոր վերադարձած Յովհ. Լոռու-Մելիքեանը բերել էր արմենականների հետ գաղափարական կապերով կապուած Մ. Փորթուգալեանի յայտարարութիւնն այն մասին «...թէ իր կուսակցութիւնը այսուհետեւ գործելու է Դաշնակցութեան ղեկավարութեան տակ, մի կողմ



Նետելով անհատորէն քայլեր անելու նախկին ձեր»<sup>23</sup>: Ի տարբերութիւն  
արմենականների, հնչակեանները շարունակում էին մնալ անհաշտ  
դիրքերի վրայ:



## ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔԸ

Ժողովին մասնակցելու համար Ռուսաստանից, Պարսկաստանից եւ Թուրքիայից եկել էին վճռական ձայն ունեցող 65 պատգամաւորներ: Թիֆլիսում, ոստիկանութեան խիստ վերահսկողութեան պայմաններում մեծ թուով պատգամաւորների հաւաքումը խիստ վտանգաւոր էր: Այդ պատճառով «Կենտրոնի» անդամներից մէկը՝ Յովհաննէս Լոռու-Մելիֆեանը դիմեց կուսակցութեան կողմից արդէն բազմիցս փորձուած հին հնարքին: Նա յայտնեց ոստիկանութեանը, որ Փարիզից վերադառնալու կապակցութեամբ պատրաստուում է ընկերներին հրաւիրել ու մի խնջոյք կազմակէպել: Ինչպէս վկայում է Լ. Սարգսեանը, «նշանակուած օրը նրա ընդարձակ դահլիճում պատրաստ էր խնջոյքի սեղանը: Որոշուած էր, որ «կապոյտ բեռիների» անակնկալ այցելութեան դէպքում՝ «նախագահը» եւ «բաղաձայնականը» վերածուեն «թամադի» եւ «կենաց բաժակների»<sup>24</sup>: Լեւոն Սարգսեանը, որպէս վերջին տարում կուսակցութեան ղեկին ամէնից մօտ կանգնած անձնաւորութիւն, ընտրուեց նախագահ եւ միաժամանակ հաշուետուութիւն տուեց Հ.Յ. Դաշնակցութեան երկամեայ գործունէութեան վերաբերեալ: Քանի որ Յովհ. Լոռու-Մելիֆեանի բնակարանը գտնուում էր քաղաքի կենտրոնում եւ նոր «խնջոյքի» դէպքում անմիջապէս կարող էին կասկածներ առաջանալ ոստիկանների մօտ, ժողովի առաջին օրը «..որոշուեց Լ.Ժ.Ի կողմից ընտրել մի Լիազօր Յանձնաժողով (Լ.Յ.)՝ մշակելու Հ.Յ.Դ. Ծրագիրը եւ Գործելակերպը»<sup>25</sup>: Լիազօր Յանձնաժողովը սկսեց աշխատել Թիֆլիսի հեռաւոր ծայրամասում՝ Չուղուրեթի թաղում, ուր ընկերներից մէկի բնակարանում երկու շաբաթ նիստեր էին անում, եւ նոյն տեղում էլ սնում ու բնում էին Լիազօր Յանձնաժողովի անդամները: Չնայած առկայ սկզբունքային տարածայնութիւններին «Ոչ ոք ձեռնարկութիւնների ետեւից չէր ընկած. ոչ արձանագրութիւն էր կազմում եւ ոչ ֆուէրկութիւն կատարում: Աշխատանք էր գործադրում՝ իրար համոզել եւ մի ընդհանուր լեզու գտնել»<sup>26</sup>, -վկայում է Լ. Սարգսեանը: Նոյն փաստը իր յիշողութիւններում հաստատում է նաեւ Ռոստոմը. «Ժողովը ուներ խորհրդակցական բնաւորութիւն, առաւել՝ մտքերի փոխանակութիւն, այդ պատճառով բոլոր այն հարցերը, որ դրւում էին, ենթարկւում էին վիճաբանութեան մինչեւ այն ժամանակ, երբ բոլորն էլ համաձայնում էին հարցի այս կամ այն վերջնական ձեռնարկման վրայ. ոչ մի հարց չի ենթարկուել ֆուէրակութեան. բոլորը ընդունուել են միաձայն հա-



ւանութեամբ»<sup>27</sup>: Իրարամերժ տեսակէտներ պաշտպանողների միջեւ հաշտութեան եզրեր գտնելու գործը, ինչպէս ասում էին «անուշի կապելը» իրականացնում էր Քր. Միֆայէլեանը: Երկրորդ շաբաթուայ ընթացքում Լիազօր Յանձնաժողովը սկսեց կամաց-կամաց նօսրանալ. ընկերները աստիճանաբար հեռանում էին Թիֆլիսից: Սակայն պատգամատուների մի մասը՝ առաւել կարող ուժերը մնացին տեղում եւ բուռը բանավէճերում յստակեցրին կուսակցութեան ծրագրի հիմնական կէտերը: Յովսէփ Արղութեանը, որը Պետոյի եւ մի քանի այլ ընկերների հետ միասին մինչեւ վերջ մասնակցեց Լիազօր Յանձնաժողովի նիստերին, հետագայում վկայում էր, որ ժողովում հանդէս էին եկել երկու հոսանքներ: Մի հոսանքը գտնում էր, որ «...մեր ապագայ գործունէութեանը պիտի տալ միմիայն քաղաքական պայքարի բնոյթ՝ անտես առնելով բոլոր տնտեսական-սոցիալական հարցերը: Միւս հոսանքը պնդում էր, որ քաղաքական պայքարի հետ զուգընթացաբար պիտի խիստ պրոպագանդ մղել տնտեսական-սոցիալական հարցերի շուրջը ոչ միայն հայ գիւղացիութեան, այլեւ հարեւան ազգերի-տանհիկների, ասորիների, ֆիրդերի-աշխատատուր գանգուածների մէջ եւ այդ ուղղութեամբ համերաշխութեան հող նախապատրաստել»<sup>28</sup>: Տարածայնութիւնների ողջ մանրանկարը աւելի ամբողջական ձեւով է ներկայացնում Լ. Սարգսեանը՝ դրանք բաժանելով երեք հիմնական խմբերի «1) Կենտրոնացում, թէ ապակենտրոնացում. 2) Ինքնապաշտպանութիւն եւ շրջահայեաց անաղմուկ գործելակերպ եւ ուժերի կուտակում, թէ յախուռն ազրեսիւ ընթացք եւ անարխիստական-խլրտումնուական շոնդալի ցուցարարութիւններ եւ 3) այժմ միայն քաղաքական անկախութեան լոզունգ, թէ միաժամանակ նաեւ տնտեսական-սոցիալական պահանջներ»<sup>29</sup>: Այս երեք երկրնորանքների մէջ խտացած էին հայ ազատամարտի խնդիրների ու հեռանկարների նկատմամբ ազատական ու յեղափոխական մօտեցումների հակամարտութեան ամենասուր կէտերը: «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» մէջ մտած ազատական գործիչները փորձում էին հայ ազգային-ազատագրական շարժումը պահել ազգային-քաղաքական խնդիրների համակարգում եւ դուրս չբերել նրանց շրջագծից, պատճառաբանելով, որ դա կարող է խախտել հայութեան ներսում առկայ ուժերի միասնական ճակատը: Այդ խնդիրների բարձրացումը նրանք անհիմաստ ու անօգուտ էին համարում նաեւ այն պատճառով, որ Թուրքիայում «...սոցիալական եւ սոցիալիստական շարժման համար հողը պատրաստ չէր: Այդ պատճառով քաղաքական անկախութեան կոչը



չպէտք էր խնդրել ու բարդացնել սոցիալիստական պահանջներով դրդուած լոկ ոեկլամային միտումով»<sup>30</sup>: Այս տեսակետը պաշտպանում էին երկրից եկած այն գործիչները, որոնք ծանօթ էին Թուրքիայի իրականութեանը: Նրանց ընդդիմախօսները նույնպէս դէմ էին արտայայտում տուեալ փուլում ընկերվարական գաղափարների փարոզին, սակայն առաջ էին փաշում ընկերային տարբեր խաւերի եւ առաջին հերթին գիւղացիութեան կացութիւնը շօշափող միջոցառումների մի համակարգ, որը դեռեւս մինչեւ առաջին Ընդհանուր Ժողովը ամփոփ ձեւով արտացոլուել էր «Դրօշակի» թիւ 3-ում որպէս հայ գիւղացու վիճակի բարտման, նրան հողով ապահովելու եւ տուրքերի սահմանափակման պահանջ: Այն աւելի էր յստակեցուել ու հարստացուել առաջին Ընդհանուր Ժողովում ընդունուած ծրագրի «Նպատակ» բաժնում, որի 1894ին հրապարակուած տարբերակի 11-րդ կէտը պահանջում է նույնիսկ «ոյժ տալ գիւղացու եւ արհեստաւորի համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւնները, ձեւերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրայ տեղական եւ պատմական հանգամանքների ազդեցութեան տակ»<sup>31</sup>: Դրանով իսկ կուսակցութիւնն օժտում էր «...ընկերվարութեան տեսլականով հարստացած էապէս ժողովրդավարական աշխարհայեցողութեամբ...»<sup>32</sup> եւ ժողովում յաղթանակ տարած յեղափոխական թերը ընկերվարութիւնն ընդունելով որպէս անխախտ սկզբունք, միաժամանակ հասկանում էր պայքարի տուեալ հանգրուանին այդ սկզբունքի բացայայտ պաշտպանութեան աննպատակայարմարութիւնը: Բայց միայն ազգային-փառաքան պահանջների առաջադրումը սահմանափակում էր շարժման առջեւ կանգնած խնդիրների շրջանակը եւ նրա մասնակիցների թիւը, քանի որ հայ ժողովրդի մեծամասնութիւնը Թուրքիայում ենթարկում էր եւ ազգային ճնշման եւ տնտեսական իրաւունքների ու ազատութիւնների ոտնահարման: Վերջիններիս պաշտպանութիւնը կուսակցութիւնը դիտում էր որպէս շարժումը խթանելու եւ նրան համաժողովրդական բնոյթ տալու միջոցներից մէկը: Բացի դրանից, ի հակադրութիւն ընկերային առումով անորոշ «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» ձեւաւորուող «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» կրկնակի ճնշման տակ գտնուող աշխատատրութեան տեսանկիւնից էր նայում ազգային-ազատագրական շարժման խնդիրներին, որն անխուսափելի էր դարձնում եւ փառաքան եւ ընկերային պահանջների առաջադրումը, որոնք դիտում էին որպէս փոխադարձաբար միմեանց լրացնող ու խթանող գործօններ: Դրանով իսկ նոր



ձեւաւորուող կուսակցութիւնն ընդգծում էր իր եւ ազգային եւ միաժամանակ ժողովրդա-աշխատաւորական բնոյթը: Դա էր պատճառը, որ Հիմնադիր ժողովներում արդէն ձեւակերպուած նպատակը՝ «...Տանկահայաստանում ձեռք բերել քաղաքական եւ տնտեսական ազատութիւն...»<sup>33</sup> առաջին Ընդհանուր ժողովում ընդունուած ծրագրի մէջ իր արտաքին տեսքով մնում էր անփոփոխ, բայց իր խորքում գտնուող նրժարի երկու կողմերն էլ լցում էին ուշալ բովանդակութեամբ: Եւ եթէ տնտեսական ազատութեան խնդիրը առայժմ սահմանափակուում էր ռամկավարական բնոյթի բարենորոգումների շրջանակով (պահպանելով ընկերվարական գաղափարների տեսլականը), ապա քաղաքական ազատագրութեան պահանջը ձեւակերպուում էր ոչ թէ որպէս անկախութեան, այլ սոսկ լայն ինքնավարութեան խնդիր, որի «խոհական չափաւորութիւնը» (Մ.Վարանդեան) Քր. Միքայէլեանի ձեռքով էր գծուած: Դրանով իսկ ձեւաւորուող «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» սկզբունքով անկախական կուսակցութիւն լինելով միաժամանակ պահպանում էր քաղաքական բարդ իրադրութիւնների պայմաններում մարտավարական բնոյթի քայլեր անելու բազմաթիւ հնարաւորութիւններ: Դեռեւս Վ. Նաւասարդեանն է յստակօրէն բացայայտել Հ.Յ.Դաշնակցութեան առաջին ծրագրի «Տանկահայաստանի տնտեսական եւ քաղաքական ազատութիւն» պահանջի խորքում առկայ առանձնանալու թափնուած միտումն ու նպատակը, քանի որ այդ ծրագիրը «...Տանկաստանից գատում ու բաժանում է միմիայն Տանկահայաստանը եւ այն դարձնում՝ Հայաստան»<sup>34</sup>:

Առաջին Ընդհանուր ժողովը գտնուում էր քաղաքական այնպիսի իրողութիւնների յանդիման, որոնք հարկադրում էին լուրջ քննել ու նրժգրտել կուսակցութեան ռազմավարութիւնն ու մարտավարութիւնը: Ժողովի մասնակիցները լաւ էին գիտակցում այդ ամէնը եւ նրանց ներսում ամրապնդում էր այն համոզմունքը, որ «...կուսակցութիւնը չէր կարող չթուլանալ, քանի որ գործունէութեան նախկին ծրագիրը չէր համապատասխանում գլխաւոր կէտերում յեղափոխական կեանքի իսկական պահանջներին»<sup>35</sup>: Պայքարի նոր ձեւերի որոնումները գաղափարական լուրջ բախումներ առաջացրին Ընդհանուր ժողովի մասնակիցների միջեւ: Ընդհանուր ապստամբութեան խնդիրը, որը բոլորը փայփայել էին Հիմնադիր ժողովների շրջանում, այժմ անապատում յայտնուած տեսիլքի նման քանի գնում աւելի հեռու եւ անհասանելի էր թուում: Հայ իրականութեան առարկայական պայմանների հետ ծա-



Գօթանալուն զուզընթաց պարզ էր դառնում նրա անհնարինությունը: Դա է թերեւս պատճառը Հ. Տասնապետեանի կողմից նկատուած այն իրողութեան, որ Ընդհանուր Ժողովի կողմից ընդունուած ծրագրի խըմորատիպ օրինակում ձեւակերպուած ընդհանուր ապստամբութիւն հասկացութիւնից 1894ին «Դրօշակում» հրատարակուած տարբերակում մնացել էր միայն ապստամբութիւն բառը<sup>36</sup>: Եւ այդ պայմաններում ժողովի մասնակիցների մօտ չկար ժողովրդին դէպի ընդհանուր ապրստամբութեան ուղին տանող մարտավարական խնդիրների յստակ գիտակցումը ու նրան հասնելու համար անհրաժեշտ հանգրուանների առանձնացումը: Կարնից եկած Արամ Արամեանը (Արշաւիր Յովասափեան) եռանդուն կերպով ֆարոգում էր անհատական տեղորի գաղափարը եւ գտնում էր, որ այդ գործողութիւնը կատարելուց յետոյ նրա հեղինակը պարտաւոր է մնալ տեղում ու չհեռանալ, իսկ Տիգրան Օֆոնեանը պաշտպանում էր «Հրահանգներ հրոսակային խմբերին» փաստաթղթի հիմնական կէտերը: Նոյն գաղափարներով էր ոգեւորուել նաեւ Սիմոն Զաւարեանը, պահանջելով «..կտրատել հեռագրական թելերը, թալանել պոստը, պայթեցնել գէնֆի պահեստները, ֆանդել կամուրջները...»<sup>37</sup>: Լ. Սարգսեանը եւ նրա կողմնակիցները այս տեսակէտը համարում էին զգացմունքի ժամանակաւոր յաղթանակ սառը բանականութեան նկատմամբ, զգացմունք, որն այլեւս չէր դիմանում անվերջ բռնութիւններին ու հալածանքին եւ պոռթկում էր կացութեան անելանելիութիւնից ծընւած իր անխոհեմութեան ողջ թափով: Դա հայոց մահուան պարի բեմականացման սկիզբն էր, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան հետագայ փուլերում նոյնպէս յաճախ հանդէս եկած այն հերոսական յուսահատութեան խորհրդանիշը, որի երեւոյթը իր անկեղծութեամբ ու գոհատուութեամբ եզակիներից է համաշխարհային պատմութեան մէջ: Բայց հնարաւոր չէ բանականութեան չափանիշներով գնահատել այն, ֆանգի նա դուրս է գալիս մարդկային սովորական կեցութեան շրջանակներից՝ իր խորքում արտացոլելով այդ կեցութիւնը վաղուց խախտած ուժերին համանման ու համիմաստ ձեւով հակազդելու ձգտումը: Մարտավարութեան շուրջը տարուող այս բանավէճերը ի վերջոյ չափաւորում էին ռազմավարական նպատակի ձեւակերպման ընթացքում եւ զգաստանալով, Ընդհանուր Ժողովի մասնակիցները հարկ էին համարում «..որ առժամապէս կազմակերպութեան ճիգերը կեդրոնանան գէնֆի փոխադրութեան, ժողովրդի զինման ու մարզումի աշխատանքին շուրջ: Զգաստ դիտողներ՝ մեր դեկավար գործիչները հասկցեր էին, որ հակա-



ուակ երիտասարդ տարրերու հանուր խանդավառութեան, ժողովրդի լայն զանգուածները պատրաստ չէին բնաւ համատարած շարժումի համար...»<sup>38</sup>, - գրում է Մ. Վարանդեանը:

Պայքարի նպատակը եւ նրան հասնելու այն միջոցները, որոնք որդեգրեցին առաջին Ընդհանուր Ժողովի մասնակիցները, անհրաժեշտութիւն էին դարձրել կուսակցութեան կազմակերպական հին կառոյցի վերափոխումը: Դա հարկաւոր էր երկու հիմնական պատճառների թելադրութեամբ Առաջինը հայ ժողովրդի դառը ճակատագրի ծնունդ հանդիսացող փաստացի այն իրավիճակն էր, երբ նրա առանձին հատուածները ցրուած լինելով Անդրկովկասում, Ռուսաստանում, Պարսկաստանում եւ այլուր, կտրուած էին միմեանցից, ապրում էին աշխարհագրական տարբեր գօտիներում, ենթարկուած տարբեր վարչակարգերի: Ղեկավարել մէկ կենտրոնից նշանակում էր միւսներին պարտադրել գործունէութեան այնպիսի սկզբունքներ ու եղանակներ, որոնք մի միջավայրի համար լինելով ճիշտ ու նպատակայարմար, միւսի համար վերածուում էին նրա հակադրութեան: Կազմակերպական կենտրոնացումը ճնշում էր տեղական նախաձեռնութիւնը եւ Հիմնադիր ժողովներից մինչեւ առաջին Ընդհանուր Ժողովն ընկած ժամանակամիջոցում բազմաթիւ դժգոհութիւնների տեղիք էր տուել, որոնք առաջին հերթին ուղղուել էին «Կենտրոնի» փաստացի ղեկավարութիւնը իր ձեռքը վերցրած Լեւոն Սարգսեանի դէմ: Կազմակերպական կառոյցը փոխելու անհրաժեշտութիւնը պայմանաւորող երկրորդ պատճառը առաջին Ընդհանուր Ժողովի որդեգրած պայքարի այն մեթոդներն էին, որոնք պաշտպանութեան էին արժանանում յեղափոխական մեծամասնութեան կողմից: Դրանք պահանջում էին ինքնուրոյնութիւն տալ տեղերում գործող կոմիտէներին եւ նրանց չպարտադրել: Այս հարցը ունէր իր խոցելի կողմը, քանի որ ճանապարհ էր բացում նաեւ արկածների սիրահար պատահական մարդկանց համար: Այդ պատճառով կառոյցի փոփոխութիւնը չպէտք է նշանակէր նաեւ գաղափարական սկզբունքների փոփոխութիւն:

Կուսակցութեան կազմակերպական կառոյցը ապակենտրոնացման սկզբունքով փոխելու հարցը բարձրացուել էր դեռեւս «Դրօշակ»ի 2րդ թուի առաջնորդող յօդուածում: Այնտեղ գրուած էր «Ապակենտրոնացման (դեցենտրալիզացիա) ու տեղական ինքնուրոյն նախաձեռնութեան վերայ հիմնուած յեղափոխական կազմակերպութիւնը՝ իբրեւ հարիւր գլխանի վիշապ կը գործի ամէն տեղ եւ ամէն տեսակ ձեւերով ու հնարքներով»<sup>39</sup>: Այդ սկզբունքը, ինչպէս տեսանք, ժողովի նախօրէին յստակօ-



րէն ձեւակերպուել էր Յ. Դաւթեանի եւ Տ. Օֆոնեանի կազմած «Հրաւերի» մէջ: Սակայն ժողովի սկզբում այն ունէր բաւականին լուրջ հակառակորդներ: «1892թ. Ընդհ. ժողովին մանաւանդ շրջաններից եկած պատգամաւորները ունէին միմիայն մի նպատակ, որքան կարելի է ուժեղացնել «Կեդրոնը», մտցնելով այնտեղ կուսակցութեան մէջ աչֆի ընկնող եւ ձեռներէց ընկերներին»<sup>40</sup>, -գրում է Ա. Գիւլիսանդանեանը: Այս տեսակէտը պաշտպանողների թւում էին երկրից եկած Պետոն (Ալ. Պետրոսեան) եւ Յովսէփ Արղութեանը: «Կենտրոնի» ուժեղացումը նըրանք համարում էին երկիր անցածների համար թիկունք ստեղծելու միջոց: Սակայն անհնար էր յենուել նման թիկունքի վրայ, եթէ բացակայէր տեղական ուժերի նախաձեռնութիւնը, որը պայքարի տուեալ փուլում վճռական նշանակութիւն էր ստանում: Գործի ծանրութեան կենտրոնը տեղափոխում էր դէպի գաւառներն ու երկիր, որոնց ինքնուրոյն նախաձեռնութիւնից էր կախուած շարժման ապագան: Գիտակցելով այդ հանգամանքը ապակենտրոնացման կողմնակիցները վճռական պայքար սկսեցին իրենց սկզբունքների հաստատման համար: Եւ այդ պայքարում, ինչպէս վկայում են ժողովի մասնակիցներն ու հետագայ ուսումնասիրողները վճռական դեր խաղաց Յոնան Դաւթեանը: «Դուրս գալով յատուկ զեկուցումով՝ նա համոզում է «Կեդրոնացման» կողմնակից ընկերներին հրաժարուել իրենց տեսակէտից եւ ընդունել «ապակեդրոնացման» սկզբունքը՝ իբրեւ միակ եւ առողջ սկզբունք յեղափոխական գործունէութեան համար»<sup>41</sup>: Յոնան Դաւթեանի եւ նրան ջերմօրէն պաշտպանող Սիմոն Զաւարեանի յաղթանակը իրենց փաստարկներով շատ աւելի ծանրակշիռ տեսք ունեցող «զգոյշ ու շրջահայեաց» ազատականների նկատմամբ արտացոլում էր յեղափոխական տրամադրութիւնների վերելքը, որոնք դուրս էին գալիս ազատական պատկերացումների գապաշապկից եւ իրենց իրականացման համար նոր ձեւեր էին որոնում: Եւ ապակենտրոնացումը լինելով այդ ձեւը պայմանաւորում էր այն պաշտպանող գործիչների ոչ միայն գաղափարական միասնութիւնը, այլեւ բարոյական հասկացութիւնների նոր համակարգը: Ապակենտրոն կառոյցը հարկաւոր էր այն գործիչներին, որոնք նուիրեալներ էին, գաղափարի մարտիկներ, այդ պատճառով նըրանց համար, ինչպէս Ս. Զաւարեանն էր ասում, չէր կարող լինել «...իրաւունքի եւ պահանջի խնդիր, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան եւ բարարարութեան խնդիր»<sup>42</sup>: Այս սկզբունքը դարձաւ ծրագրային եւ ճանապարհ բացեց մի սերնդի առջեւ, որը չէր սակարկում



կիսելու դէպի մահ գնացող իր հայրենակիցների ճակատագիրը՝ ինքնագոհաբերութեան քրիստոնէական սկզբունքը միացնելով յեղափոխականի գաղափարական համոզմունքներին: Դրանով կերտում էր հայի մի նոր բարոյական տիպ՝ հերոսական, յաճախ յուսախաբ, բայց միշտ ինքնամոռաց կերպով նախաձեռնող ու նուիրուող: Թշնամու ձեռքին յօշոտուող ցեղի յուսահատ ու անհուսասար ինքնապաշտպանութիւնն էր ծնում բարոյական հասկացութիւնների այդ համակարգը: Եւ կացութեան անելանելիութիւնը այդ մարդկանց մօտ չէր ստեղծում հաւատի կորուստ, այլ իրենց բարոյական պարտքը կատարելու ճրգտում: Նրանք մինչեւ վերջ հաւատարիմ էին մնում իրենց սկզբունքներին եւ դաշնակցականի բարոյական նկարագրին:

Ապակենտրոն կառոյցի ձեւաւորումը նաեւ բազմաթիւ կազմակերպական խնդիրներ էր ծնում: Այդ պայմաններում կոմիտէները միաւորող, նրանց համար սկզբունքներ մշակող հաստատութեան դերը իր վրայ էր վերցնում Ընդհանուր ժողովը, որի ընդունած ծրագիրը դառնում էր բոլորի համար պարտադիր փաստաթուղթ: Այդ ծրագիրը սահմանում էր ընդհանուր սկզբունքները. «Թո՛ղ կուսակցութեան Ընդհանուր ժողովը որոշէ ընդհանուր սկզբունքներն ու տակտիկը, բայց թո՛ղ իւրաքանչիւր վայրի ընտրեալ մարմինը ինքը վարէ իր տեղական գործերը, ինքը նախաձեռնէ եւ կատարէ, ղեկավարուելով նոյն ընդհանուր սկզբունքներէն»<sup>43</sup>:

Տեղերում գործող կոմիտէների կապն ու գործակցութիւնը ապահովելու համար Ընդհանուր ժողովը որոշեց ստեղծել երկու բիւրներ՝ Թիֆլիսում եւ Թաւրիզում: Սրանք պիտի դառնային տեղեկատու-համակարգիչ, բայց ոչ որոշող ու պարտադրող մարմիններ:

Ապակենտրոնացման կողմնակիցների յաղթանակը եւ այդ յաղթանակի արդիւնք հանդիսացող անդրանիկ ծրագրի «Կազմակերպութիւն» բաժինը իր 7 կէտերով չէին սահմանում կուսակցութեան կառոյցի առանձին օղակների փոխգործակցութեան եղանակները: Առաջին Ընդհանուր ժողովը փաստօրէն որոշեց սուկ ապակենտրոնացման սկզբունքները, իսկ իրականացման մեխանիզմները մշակուեցին մինչեւ երկրորդ Ընդհանուր ժողովն ընկած ժամանակամիջոցում եւ իրենց վաւերացումը գտան նրա որոշումներում:

Բուռն բանավէճերի մթնոլորտում ձեւաւորում էր մի նոր, մարտական ու յեղափոխական կուսակցութիւն՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն-



նը: Գաղափարական ու կազմակերպական կարեւորագոյն սկզբունքները արդէն որոշուել էին, բայց մանրամասները ճշգրտումի կարիք ունէին: «Երկու շաբաթուայ ընթացքում տեղի ունեցան շատ տաք վէճեր, նի- գակների ու վահանների բախումներ. շատ բան էր ասուած, բայց դեռ շատ բան էր մնացել չպարզուած, - գրում է Լ.Սարգսեանը: Վճռուեց ընտրել երեք հոգուց մի մասնաժողով, որին յանձնել՝ համաձայնեցում ու ձեւակերպում բոլոր ֆննուած հարցերի եւ՝ ծրագրի ու գործելակերպի մշակում: Առաջարկուած էին երեք հոգի. Բ.Մ., Ս.Զ., եւ տողերիս գրո- դը: Աշխատանքի հետեւանքը, իհարկէ պէտք է ներկայացուէր Ընդ- ժող. հաստատութեան»<sup>44</sup>: Ընդհանուր ժողովում անյաջողութեան հանդիպած Լ.Սարգսեանը խնդրեց յետաձգել մասնաժողովի աշխատանք- ները մինչեւ աշուն եւ Թիֆլիսից հեռացաւ իր հայրենի Ցղնա գիւղը: Շուտով նրան հրաւիրեցին ստանձնելու տեսչի պաշտօն Դարաբաղի հայոց թեմական դպրոցում: Սկզբում Լ. Սարգսեանը փորձեց հրաժարուել, սակայն դպրոցի հոգաբարձութիւնը դիմեց Բր. Միքայէլեանին: Վերջինս հեռագրով իր եւ ընկերների անունից առաջարկեց ընդունել այդ հրա- տերը: Արդէն օգոստոսի 18ին «Մշակը» հաղորդում էր, որ «Շուշու թե- մական դպրանոցի տեսչի պաշտօնի համար հրաւիրուած է պ. Լեւոն Սարգսեան, եւ արդէն հաստատուած է այդ պաշտօնում»<sup>45</sup>: Լեւոն Սար- գսեանի եւ նրա կողմնակիցների ֆաղափական գիծը մերժուել էր Ընդ- հանուր ժողովի կողմից եւ այդ պատճառով նրա հեռացումը դարձել էր անխուսափելի: Վերջինիս փոխարէն մասնաժողովի երրորդ անդամ ընտրուեց Ռոստոմը, որը Քրիստափորի եւ Սիմոնի հետ միասին մի անխզելի գաղափարա-ֆաղափական երրորդութիւն ստեղծեց: Մասնաժո- ղովը շարունակեց ծրագրի մշակման աշխատանքները եւ միաժամանակ առաջին Ընդհանուր ժողովում ընդունուած «բուն ծրագիրը» կամ ծրա- գիր-կանոնագիրը բազմացնելով ուղարկեց այն ընկերներին, որոնք նը- րա կարիքն էին զգում: Դրանից մի օրինակ ընկաւ ոստիկանութեան դե- պարտամենտի ձեռքը: Այն Թիֆլիսից՝ մի անյայտ անուանութեան կողմից 1892թ. սեպտեմբերի 30ին ուղարկուել էր Կարս՝ խաչատուր Քիրօզեանցին: Փաստաթղթի յայտնաբերումով հաստատում է Հ. Տասնապետեանի հետեւեալ ենթադրութիւնը. «Կը թուի, - գրում է՝ նա, - թէ խմորատիպ այդ օրինակները մարմիններուն ցրուած են Առաջին Ընդհանուր ժողովէն անմիջապէս ետք....»<sup>46</sup>: Սակայն այդ կարեւոր վաւերագիրը յայտնաբերած ոստիկանները չկարողացան պարզել, թէ ո՛ր կազմակերպութեան ծրագրի հետ գործ ունեն իրենք, քանի որ թարգ-



մանիչը սխալ էր թարգմանել Հ.Յ.Դաշնակցութեան անունը: Մինչդեռ դա հէնց Հնդհանուր ժողովում ընդունուած «բուն ծրագիրն» էր, կամ ծրագիր-կանոնագիրը առանց հետագայում Ռոստոմի կողմից գրուած ընդարձակ ներածութեան<sup>47</sup>: Այսպիսով, Հ.Յ. Դաշնակցութեան «բուն ծրագիրը» կամ ծրագիր-կանոնագիրը վերջնականապէս ձեւակերպուեց առաջին Հնդհանուր ժողովում, որից յետոյ ակընյայտ դարձաւ աւարտուած անգիջում գաղափարական պայքարի տուեալ շրջափուլի սահմանագիծը: Արդէն պարզուել ու հաստատուել էին սկզբունքներն ու մօտեցումները, իսկ Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարական երրորդութիւնը շարունակում էր ծրագրային փաստաթղթերի մշակումը:



## ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԱՍԵՐԸ

Հ.Յ. Դաշնակցութեան առաջին Ընդհանուր ժողովը ճակատագրական դեր խաղաց ինչպէս մայր կուսակցութեան, այնպէս էլ ողջ հայ ազատամարտի պատմութեան մէջ: Նրա մշակած գաղափարական ու կազմակերպական սկզբունքները որոշեցին արեւմտահայերի մի ամբողջ տասնամեակ տեւած հերոսական պայքարի ուղղութիւնն ու եղանակները: Ժողովը պարզութիւն մտցրեց 1890ին ստեղծուած «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» նպատակների ու գործելակերպի մէջ: Տեղի ունեցաւ այն որակական տեղաշարժը, որի հետեւանով ստեղծուեց «ոչ այնքան յեղափոխականների դաշնակցութիւն, այսինքն՝ յեղափոխական մարդկանց միութիւն, այլ յեղափոխական դաշնակցութիւն, այսինքն՝ յեղափոխական մի որոշ ծրագիր հետապնդող կուսակցութիւն, որ ունի յեղափոխական գործելակերպ: Եւ աստիճանաբար Դաշնակցութիւնը դարձաւ ոչ թէ առհասարակ յեղափոխականների միութիւն, այլ դաշնակցական իմաստով յեղափոխականների կազմակերպութիւն»<sup>48</sup>: Այս տեղաշարժի հետեւանով փոխոււմ էր նաեւ Հ.Յ. Դաշնակցութեան շուրջը համախմբուած երիտասարդների գաղափարական նպատակամղուածութիւնն ու գործունէութեան եղանակը: Ազատականների ու յեղափոխականների պայքարը արարոււմ էր: 1890ին յստակօրէն գծագրուած միասնական նպատակից անցոււմ էր կատարոււմ դէպի գաղափարական ու կազմակերպական սկզբունքների միասնութիւնը: Ձեւաւորոււմ էր յեղափոխական, մարտական, ապակենտրոն, իր ֆաղափական նպատակներով՝ խորապէս ազգային, ընկերային յեմարանով՝ ժողովրդա-աշխատաւորական մի կուսակցութիւն, որը առաջին պլան մղելով արեւմտահայերի ազատագրութեան խնդիրը միաժամանակ պահպանոււմ էր հաւատը ընկերվարութեան յաղթանակի նկատմամբ: Դրանով իսկ կուսակցութիւնը ամուր կերպով կանգնելով ազգային խնդիրների լուծման հողի վրայ կարողանոււմ էր կապ ստեղծել իր դարաշրջանի արժէքների հետ եւ կատարել ազգայինի ու համամարդկայինի սինթեզը, որն էլ դառնոււմ էր նրա ուժի ու կետունակութեան աղբիւրը: Այսպէս ձեւաւորուեց Հ.Յ. Դաշնակցութիւնը որպէս գաղափարական ու կազմակերպական անխախտ միասնութիւն: Եւ դրա շնորհիւ էր, որ նա մի ամբողջ հարիւրամեակի ընթացքում կարողացաւ մնալ հայ ազատամարտի ղեկավար ուժը, հայ ժողովրդի լաւագոյն ձգտումների արտայայտիչն ու պաշտպանը:



## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Վ. Նաասարդեան, Գաղափարների ոգին: Դաշնակցութեան «ապակեդրոնացումի» առիթով, Գահիրէ, 1951, էջ 19:
2. Ռոստոմ, Առաջին ֆայլեր, «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան», հատ.1, Պոսթրն, 1934, էջ 90:
3. Նոյն տեղում, էջ 91:
4. Կ. Սասունի, Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (Համառօտ ակնարկ ֆառասանմեայ անցեալի վրայ), «Դրօշակ», 1930, թիւ 11-12, էջ 329:
5. Յունան Դաւթեան, Հասարակական կուսակցութիւն, Հայաստանի հանրապետութեան հասարակական-ֆաղափական կազմակերպութիւնների պատմութեան պետական կենտրոնական արխիւ, ֆ.4047, ց.1, գ.4, թ.1:
6. Հրաւէր առաջին ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին, «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան», հատ.1, Պոսթրն, 1934, էջ 95:
7. Նոյն տեղում:
8. Նոյն տեղում:
9. Նոյն տեղում:
10. Վրաստանի հանրապետութեան Պատմութեան պետական կենտրոնական արխիւ (այսուհետեւ՝ Վ.Հ. ՊՊԿԱ), ֆ. 17, ց.2, գ.706, թ.282:
11. Վ.Հ.ՊՊԿԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ.286
12. Փաստաթղթի ուսերէն վերնագիրը՝ «Инструкция шайкам, делающим набери» մենք պայմանականօրէն քարգմանում ենք «Հրահանգներ հրոսակային խմբերին», ֆանի որ 1890-1891 թուականներին վերաբերող կուսակցական փաստաթղթերում օգտագործուել է ոչ թէ հայդուկային խմբեր, այլ հրոսակային խմբեր հասկացութիւնը: Օրինակ, Ա. Գիւլխանդանեանի կողմից հրատարակուած առաջին հաշւեցոյցի մէջ (1 Նոյ.1890-10 Յուլիս 1891) ի թիւս զանազան ծախսերի յիշատակում է նաեւ հրոսակային խմբերի վրայ որպէս ապրուստ եւ ճանապարհածախս (բացի գէնից) 1768ռ. 20 կոպեկ ծախսելու մասին: Տե՛ս Ա. Սեւեան: Ե՞րբ է հիմնուել Հ.Յ. Դաշնակցութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, թիւ 2, էջ 65:
13. Վ. Հ. ՊՊԿԱ, ֆ.153, ց.1, գ.110, թ.3:
14. Նոյն տեղում, ֆ.153, ց.1, գ.110, թ.4:
15. Նոյն տեղում, ֆ.17, ց.2, գ.706, թ.283:
16. Նոյն տեղում, ֆ.153 ց.1 գ.110, թ.4:
17. Նոյն տեղում, ֆ.17, ց.2, գ.706, թ.289:
18. Նոյն տեղում, ֆ.17, ց.2, գ.706, թ.271:
19. Ռուբէն Խանազատ, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, թիւ.5, էջ 112:
20. Նոյն տեղում:
21. Տե՛ս Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, էջ 41:
22. Տե՛ս Շահէն Կուժիկեան, Լսած եւ տեսածներիցս, Ե. Զարեանի անուան Գրական-



- նութեան եւ արուեստի թանգարան, Շահէն Կուժիկեանի ֆոնդ, վառ. 3 (բ), թ. 227:
23. Լեւոն Սարգսեան, Յուշեր 1889-1892 թուականներից... Հայաստանի Հանրապետութեան Հասարակական-ֆաղափական կազմակերպութիւնների պատմութեան պետական կենտրոնական արխիւ, ֆ. 4047, ց.2, գ.9, թ.167:
  24. Նոյն տեղում, թ.168:
  25. Նոյն տեղում:
  26. Նոյն տեղում, թ. 169:
  27. Ռոստոմ, Առաջին ֆայլեր, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ.1, Պոսքըն, 1934, էջ 91:
  28. Յովսէփ Արղուրեան, Յովնան Դարեան, «Վէմ» երկամսեայ հանդէս, 1938, թիւ 3, էջ 90:
  29. Հ.Հ. Հասարակական-ֆաղափական կազմակերպութիւնների պատմութեան ՊԿԱ, ֆ.4047, ց.2, գ.9, թ.170:
  30. Նոյն տեղում, ֆ.4047, ց.2, գ.9, թ.172:
  31. «Դրօշակ», 1894, Սեպտեմբեր, թիւ 11, էջ 2:
  32. Հ. Տասնապետեան, Հ.Յ.Դաշնակցութեան Ա. Ընդհանուր Ժողովը եւ անդրանիկ ծրագիրը, «Դրօշակ» 1986, 10 Դեկտեմբերի, թիւ 17, էջ 17:
  33. «Դրօշակ» 1894, սեպտեմբեր, թիւ 11, էջ 2:
  34. Վ. Նաւասարդեան, Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1924, թիւ 4, էջ 80:
  35. Ռոստոմ, Առաջին ֆայլեր, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ.1, էջ 91:
  36. ՏԵՍ Հ. Տասնապետեան, նոյն տեղում, էջ 14:
  37. Հ.Հ.Հասարակական-ֆաղափական կազմակերպութիւնների պատմութեան ՊԿԱ, ֆ.4047, ց.2, գ.9, թ.172:
  38. Միֆայէլ Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ.1, Պարիզ, 1932, էջ 108-109:
  39. «Դրօշակ» 1891, սեպտեմբեր, թիւ 2, էջ 2:
  40. Ա. Գիւլիսանդանեան, Ապակեղրոնացումը եւ Յ. Դարեանը, «Հայրենիք» ամսագիր, 1925, թիւ 1, էջ 49:
  41. Ա. Գիւլիսանդանեան, նոյն տեղում:
  42. Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, սեպտեմբեր, թիւ 11, էջ 3:
  43. Մ. Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ.1, էջ 112:
  44. Հ.Հ. Հասարակական-ֆաղափական կազմակերպութիւնների պատմութեան ՊԿԱ, ֆ.4047, ց.2, գ.9, թ.173:
  45. «Մշակ», 1892 թ. 18 օգոստոսի, թիւ 93:
  46. Հ. Տասնապետեան, նոյն տեղում, էջ 14:
  47. ՏԵՍ Վ.Հ. ՊԿԱ, ֆ. 153, ց.1, գ.119, թ.6-7:
  48. Ն. Հանգոյց, Մտածումներ Հ.Յ.Դաշնակցութեան մասին, Փարիզ, 1930, էջ 75:



## **ԳԷՈՐԳ ԽՈՒԴԻՆԵԱՆ**

**Նայ Յեղափոխական Դաշնակցության  
Առաջին ընդհանուր ժողովը**

**(Գումարման 100-ամեակի առթիւ)**

Ստորագրուած է տպագրութեան 25.09.1992թ.  
Չափսը՝ 60x84 1/16: Տպագրութիւնը՝ օֆսէթ:  
Տպագրական շմամուլ = 1,86 պայմ. մամուլ:  
Տպաքանակ՝ 5000: Պատուէր՝ 317:

«Միֆայէլ Վարանդեան» հ/պ ձեռնարկութիւն  
Երեւան, Շոպրոնի փողոց, թիւ 21



